Հավելված N 7
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ

1. Ջրօգտագործման թույլտվությունը դադարեցվում է օրենսգրքի պահանջների համաձայն:

2. Եթե ջրօգտագործման թույլտվություն ունեցող անձից պահանջվում է ունենալ լիցենզիա, սակայն անձը մեկ տարվա ընթացքում չի ստանում այն, ապա նրա ջրօգտագործման թույլտվությունը համարվում է առ ոչինչ:

3. Եթե ջրօգտագործման թույլտվության պայմանների փոփոխման դեպքում ջրօգտագործման թույլտվություն ունեցող անձը նոր թույլտվություն չի ցանկանում կամ հրաժարվում է ջրօգտագործման իր թույլտվությունից, ապա նա գրավոր դիմում է լիազոր մարմնին՝ դիմումին կցելով ջրօգտագործման թույլտվության իր օրինակը և կատարելով նշում դրանից հրաժարվելու մասին:

4. Ջրօգտագործողի դիմումը ջրօգտագործման թույլտվության բնօրինակի հետ միասին լիազոր մարմին մուտքագրվելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը որոշում է կայացնում ջրօգտագործման թույլտվությունը դադարեցնելու մասին:

5. Ջրօգտագործման թույլտվությունը դադարեցվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, ինչի մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին:

6. Ջրօգտագործման թույլտվությունը դադարեցնելու մասին հրամանն ընդունելուց հետո լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է ջրային պետական կադաստրում և անվավեր ճանաչում գրանցված ջրօգտագործման թույլտվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ